ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ԴՎԻՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 1977 Թ.

Դվինի վերջին տարիների պեղումները զգալի նյութեր են ընձեռում միջնադարյան քաղաքաշինության և տնտեսության բազմակողմանի ուսումնասիրության համար։ Հատուկ ուշադրություն է հատկացվում քաղաքի բնակչության սոցիալական տարբեր շերտերի կյանքի ու կենցաղի առանձին հարցերի վերհանմանը։ 1977 թ. պեղումները հիմնականում հետապնդում էին առաջադրված այս խնդիրների լուծումը և լրացնում ու հաստատում են նախորդ տարիների արդյունքների կարևոր հետևությունները։

Պեղման աշխատանքները կենտրոնացվել են քաղաքի երեք կետերում. 1. միջնաբերդի արևմտյան լանջին, ուր նախորդ տարիներից բացվում է արհեստավորական մի թաղամաս, 2. միջնաբերդի հարավային պարսպի մեծ աշտարակներից մեկի ներսում, աշտարակի և բնակելի տների փոխհարաբերությունը պարզելու նպատակով, 3. քաղաքի կենտրոնական թաղամասում՝ V դարի կաթողիկոսական պալատի արևելյան և հարավային թևերում։ Հետախուզական պեղումներ են կատարվել քաղաքի հարավային թաղամասերից մեկում։

Դվինի գոյության վերջին երկու հարյուրամյակներում քաղաքի միջնաբերդի ստորին հատվածները, անմիջապես պարիսպների հարևանությամբ, խիտ կառուցապատված են եղել։ Դրա փայլուն վկայությունը կարելի է համարել պեղումների ժամանակ բացված բնակելի և տնտեսական շինությունները, արտադրական համալիրները, որոնք բազմաթիվ վերակառուցումների հետքեր են կրում։

Շերտագրական մանրակնին դիտարկումները, գտնված մեծաքանակ դրամները և նյութական մշակույթի մնացորդները տալիս են բացվող շինությունների ճշգրիտ ժամանակագրական պատկերը, այն է՝ XII դարի 50-ական թթ. մինչև XIII դարի 20-ական թթ.։ Այդ նույն ժամանակահատվածով են թվագրվում 1975—1976 թթ. բացված արհեստավորի տունը, խեցեղենի թրծման արհեստանոցը և այլ շինություններ[1]։

1977 թ. պեղումները շարունակվում էին դրանցից արևմուտք՝—e—23, 24 և—f—23, 24 հատվածներում, մոտ 100 քառ. մ. տարածությամբ (նկ. 1)։ Պեղվող ողջ հատվածում կանոնավոր շինության ոչ մի հետք չի պահպանվել, սակայն նկատելի են փուլ եկած աղյուսե պատերի մնացորդներ և հատակների բեկորներ։ Տեղում փաստագրված է կրկնակի օգտագործված վաղ միջնադարյան մի խարիսխ։ Այս պատկերը հետևանք է քաղաքի վերջին ավերածության, որը կատարվել է մոնղոլների կողմից։ Պեղավայրում բացված աղյուսաշար փոքրիկ միատիպ օջախները, երկաթե իրերի և խարամի մնացորդները, մոխրի և ածուխի մեծ կուտակումները ենթադրել են տալիս, որ այստեղ գոյություն է ունեցել երկաթի մշակման հետ կապված արտադրություն, հավանաբար դարբնոց, բազմատեսակ արտադրությամբ։ Օջախներից մեկին կից բացվեց երկարավուն մի փոսորակ (1,2×0,5×0,5 մ), որի միջից գտնվեցին 14 պղնձե դրամ, վերադիր դիմակներով հախճապակե բազմանիստ անոթ, ներսից կանաչ ջնարակով պատած լայն խողովակով փոքր սափոր և այլ նյութեր։ Նման փոսորակների առկայությունը արտադրական օջախներին և վառարաններին կից, փաստագրված է նաև նախորդ տարիների պեղումների ժամանակ՝ արհեստավորի տան հյուսիսային պատի տակ և կավանոթների թրծման վառարանի անմիջական հարևանությամբ։ Այդ փոսորակների ֆունկցիոնալ նշանակությունը մեզ մնում է անհայտ, թեպետ առաջին դեպքում դրա միջից գտնվել են՝ վրացական և եյտկուզյան 44 պղնձե դրամներից բաղկացած գանձ, հախճապակե բազմանիստ անոթ, բազմաթիվ խեցեղեն և եր-

---

[1] *Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 2։*



Նկ. 1.

կաթե իրեր։ 1976 թ. բացված հնոցին կից փոսորակը լցված էր կավագնդերով։

Բերդապարիսպների և քաղաքի պաշտպանական պարսպապատերի մոտ արտադրական հասալիրների առկայությունը նորույթ չէ միջնադարյան քաղաքաշինության մեջ։ Նման պատկերն իր ցայտուն դրսևորումն է գտնում անդրկովկասյան, միջինասիական և մերձավորարևելյան հուշարձաններում[2]։

Հավանաբար դա տնտեսական և կոմունալ տեսակետից որոշակի առավելություն ուներ, կապվելով, առաջին հերթին, ջրամատակարարման և ջրահեռացման հետ։ Դվինի միջնաբերդի համար այդ հարցերը ավելի դյուրին էին լուծվում, քանի որ պարիսպների տակով անցնում էր ջրով մշտապես լցված խոր և լայն խրամատ։ Նույն պատկերը, թիչ այլ պայմաններում, դիտվել է նաև քաղաքի արևմտյան արհեստավորական թաղամասում[3]։

Ստորին բերդում գտնված իրերի մեջ իր գեղարվեստական արժանիքներով առանձնանում է դիմակներով անոթը (նկ. 2)։ Այն ունի ու

Նկ. 2

---

[2] Н. В. Минкевич-Мустафаева, Раскопки гончарных печей на городище Орен-Кала, МИА, № 67, 1959; А. Ю. Якубовский, Краткий полевой отчет о работах Зерафшанской археологической экспедиции Эрмитажа в 1939 г., «Труды отдела Востока Эрмитажа», II, Л., 1940 և այլն։

[3] А. А. Калантарян, К вопросу о способах изготовления керамики в Средневековой Армении, «Археологические памятники феодальной Грузии», II, Тбилиси, 1974.

նիստ, որոնք պատած են երեք շարք վերադիր վարդյակներով, մարդկանց և կենդանիների դիմակներով։ Չնայած պատրաստման մեջ տեղ գտած որոշ տեխնիկական թերություններին, անոթն իր բարձրարվեստ հարթաքանդակով խոսում է պատրաստող վարպետի ճաշակի և բարձր որակավորման մասին։

Այն կարմիր տուֆից է, ունի կրկնակի քառակուսի բուն, որի անկյուններում արված են եղևնաձև փորվածքներով եռանկյունի ելուստներ, հատուկ IV—V դդ. խարիսխների հարդարանքին։ Վերնասայրը արտահայտված է շատ թույլ, տրամագիծը մեծ չէ, որը մտածել է տալիս փայտե սյան մասին. խարիսխը զարդարել



Նկ. 3

Դիմակներով հախճապակե անոթների արտադրությունը միջնադարյան Հայաստանում լայն տարածում էր ստացել։ Անառարկելի է, որ դրանց արտադրության հիմնական կենտրոններն էին Դվինն ու Անին։ Որոշ նյութեր հայտնի են նաև Վրաստանում և Ադրբեջանում, որոնք կարող էին, սակայն, ներմուծված լինել հայկական արտադրական կենտրոնից։ Անոթների հարդարման նման տեխնիկան սկզբնավորվում է XII դարի կեսերից։ Վերոհիշյալ անոթն անշուշտ պատրաստված է Դվինում, նրան հատուկ է տեղական կապույտ ջնարակը. այն խեցեգործ արհեստավորի ու պատվիրատուի անհատական մոտեցման արդյունք է։

Պեղավայրից գտնված ջնարակած խեցեղենը բնորոշ է իր ժամանակաշրջանի համար։ Դրանք հիմնականում երկրաչափական և բուսական փորագիր զարդերով, կանաչ ջնարակով պատած անոթների բեկորներ են, որոնք արտադրվել են մասսայական սպառման համար և բավարարել են շուկայական հարաճուն պահանջները.

Իր տեսակի մեջ եզակի է բացված խարիսխը։ Դիմակներով հախճապակե անոթների արտադրությունը միջնադարյան Հայաստանում լայն տարածում էր ստացել։ Անառարկելի է, որ դրանց արտադրության հիմնական կենտրոններն էին Դվինն ու Անին։ Որոշ նյութեր հայտնի են նաև Վրաստանում և Ադրբեջանում, որոնք կարող էին, սակայն, ներմուծված լինել հայկական արտադրական կենտրոնից։ Անոթների հարդարման նման տեխնիկան սկզբնավորվում է XII դարի կեսերից։ Վերոհիշյալ անոթն անշուշտ պատրաստված է Դվինում, նրան հատուկ է տեղական կապույտ ջնարակը. այն խեցեգործ արհեստավորի ու պատվիրատուի անհատական մոտեցման արդյունք է։

Պեղավայրից գտնված ջնարակած խեցեղենը բնորոշ է իր ժամանակաշրջանի համար։ Դրանք հիմնականում երկրաչափական և բուսական փորագիր զարդերով, կանաչ ջնարակով պատած անոթների բեկորներ են, որոնք արտադրվել են մասսայական սպառման համար և բավարարել են շուկայական հարաճուն պահանջները.

Իր տեսակի մեջ եզակի է բացված խարիսխը։ Այն կարմիր տուֆից է, ունի կրկնակի քառակուսի բուն, որի անկյուններում արված են եղևնաձև փորվածքներով եռանկյունի ելուստներ, հատուկ IV—V դդ. խարիսխների հարդարանքին։ Վերնասայրը արտահայտված է շատ թույլ, տրամագիծը մեծ չէ, որը մտածել է տալիս փայտե սյան մասին. խարիսխը զարդարել է քաղաքի վաղ միջնադարյան ինչ-որ կառույց և հետագայում բերվել է այստեղ։

Հետաքրքիր պատկեր է բացվում միջնաբերդի հարավային մասում, աշտարակի ներսի տարածությունը պեղելու ժամանակ։ Դվինի միջնաբերդի հզոր աշտարակների ներքին ստրուկտուրայի հարցերը մինչև այժմ որոշված չեն։ Պարիսպների և շինությունների փոխհարաբերության հարցերը, որը շատ կարևոր է պաշտպանական տեսակետից, ներկայումս արշավախմբի կարևոր նպատակներից մեկն են։ Սակայն այս տեղամասում առայժմ բացվում են քաղաքի ամենավերին շերտերը, որոնք դրամների և շինարարական մնացորդների օգնությամբ հստակորեն թվագրվում են XIII դարի սկզբով։ Պեղվող հատվածում ակնհայտ երևում են բնակելի և տնտեսական շինությունների առանձին մասեր, որոնց հատակագծերը դեռևս պարզ չեն, խիստ խճոդված են պատերի բազմաթիվ վերանորոգումների և կցոնների հետևանքով (նկ. 3)։ Եթե հարտարապետական մնացորդներն առայժմ չեն պատասխանում առաջադրված խնդիրներին,

Աղյուսակ 1

ապա նյութական մշակույթի մնացորդները շատ կարևոր են XIII դարի արտադրության որոշ կողմերի պարզաբանման առումով։ Հետաքրքիր նյութեր են հայտնաբերվել XIII դարում ջնարակած խեցեղենի արտադրության վերաբերյալ։

Մեծ թիվ են կազմում անգորապատ թասերը, որոնք պատված են թափանցիկ ջնարակով։ Անոթների հատակ զարդերը փորագիր են և կրում են կանաչ ու դարչնագույն ջնարակ (աղ. I, 1)։ Ջնարակած անոթների այս խումբը քիչ է հանդիպում Դվինի տարածքում։ Նրա արտադրությունը հատուկ է եղել քաղաքի գոյության վերջին շրջանին և դադարել է քաղաքի կործանման հետ միասին։ Անիում նման ջնարակած թասերը զգալի թիվ են կազմում այն պատճառով, որ այստեղ կյանքը շարու-



Աղյուսակ 2

նակվել է նաև XIII դարից հետո։ Այդ անոթների գերակշռող մասն՝ ունի կենդանական զարդեր։ Նույն խեցեղենի օրինակներից գտնվել են Սպիտակի XIII—XIV դդ. շերտերում, ժայռափոր բնակավայրի 1977 թ. պեղումների ժամանակ, թեև կասկածներ կան դրանք Անիից բերելու մասին։ Ջնարակած խեցեղենի այս տեսակը հիշյալ դարերում լայն մասսայականություն էր վայելում Անդրկովկասում և պատահական չեն դրանց գյուտերը ժամանակակերտ հուշարձաններում[5]։

Հիշյալ հատվածում բավական շատ են չորս և ութ թերթանի վարդյակ-զարդերով ջնարակած անոթները (աղ. I, 2)։ Վարդյակները Դվինի խեցեգործ արհեստագործների սիրված մոտիվներից էին XII—XIII դդ. և լայն տարածում ունեին անդրկովկասյան արտադրական այլ կենտրոններում։ Քաղաքի գոյության վերջին շրջանի խեցեղենի արտադրությանը բնորոշ են նաև քիչ տափակ, ուռուցիկ իրանով կճուճները՝ լայն բերանով և րլթակավոր կանթերով։ Գտնված այս տիպի կճուճները խիստ մրապատ են և խոհանոցային սպասքի հիմնական ձևերից մեկն էն եղել։ Ուշադրության է արժանի նաև պատկառելի չափերով, լայնաբերան անոթը՝ փոքր ծորակով և հորիզոնական չորս կեղծ կանթերով։ Անոթն իր կարմրանարկ պատվածքով, փայլեցումով և պատրաստման տեխնիկայով մոտենում է դրոշմազարդ կաթսաներին, որոնց առկայությունը հիշյալ շերտում ակնհայտ է։

Հնագիտական նյութերը հիմնականում հայտնաբերվում են հորերում, որոնք բավականին առատ են։ Հորերի շուրջն արված են սալահատակ թրծած աղյուսներով։ Հորերը, ի տարբերություն միջնաբերդի գագաթին բացվածներից, խոր չեն, ունեն լայն տրամագիծ, որը տեղանքին հարմարվելու որոշակի հետևանք է։

Քաղաքի կենտրոնական թաղամասում պեղումները շարունակվում են Կաթողիկե եկեղեցու հարավ-արևմտյան մասում տեղադրված V դարի կաթողիկոսական պալատի հատվածում։ Պալատի արևելյան մասում անմիջապես սյունազարդ դահլիճին կից պեղվեցին երկու մեծ սրահ՝ 6×6 մ չափի, որոնց պատերը խիստ քայքայված էին։ Կավե սվաղը պահպանվել է տեղ-տեղ 0,7 մ բարձրությամբ։ Սրահներից մեկում գտնվել են փուլ եկած պատի սվաղների բեկորներ, որոնց վրա փորագրված են եղել զարդեր, հավանարար կրոնական թեմաներով։

---

[4] Б. А. Шелковников. Поливная керамика из раскопок города Ани. Ереван, 1957.

[5] მ. მიწიშვილი, მოჭიქული ჭურჭელი ძველი საქართველოში IX—XIII სს, თბილისში, 1969, ილ. XXII—XXIX։

[6] Պալատի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Դվինի պեղումների արդյունքներին նվիրված մեր հաշվետվություններում՝ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 7 և 1978, № 2։

Բեկորներից մեկի վրա նկատելի են հունական այբուբենի առանձին տառերի ստեղներ (նկ. 4)։

Հարավային սրահը կրում է վերանորոգումների հետքեր։ Պարզորոշ նկատելի են երկու հատակներ, որոնց միջև լցված են վաղ շրջանի կղմինդրների բեկորներ։ Պալատի հարավային սենյակներից մեկի պեղումների ժամանակ գտնվեց VI դարի ապակե երկու անոթ՝ մեկը գնդաձև իրանով սրվակ (աղ. I, 4), մյուսը՝ քիչ դեղնավուն հաստ ապակուց բաժակ։ Կարծիք կա այն մասին, որ գնդաձև սրվակների նման տիպերը լցվել են նավթով և օգտագործվել են հրդեհ առաջացնելու նպատակով։ Պեղվող պալատում, մոխրի հաստ շերտի տակ արդեն երկրորդ անգամ են նման գնդաձև ապակե «ռումբերի» բեկորներ հայտնաբերվում։



Նկ. 4

Ի տարբերություն վաղ միջնադարյան նույնատիպ պալատների, Դվինի V դարի կառույցի կենտրոնական սյունազարդ դահլիճը չորս կողմից շրջապատված է եղել սենյակներով։ Դա մի փառահեղ շինություն է, որը եկեղեցու հետ միասին իշխել է քաղաքի այդ հատվածում։ Անհավանական չպետք է համարել, որ հենց այս կաթողիկոսարանում էլ տեղի են ունեցել Դվինի 506 և 554 թթ. եկեղեցական ժողովները։ Այս պալատի հետագա պեղումները մեծ կարևորություն են ներկայացնում հայկական վաղ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրության համար։

Ավերված պալատական շինության վայրում VIII—IX դդ. կառուցվել են հում աղյուսից տներ, որոնք ոչնչացել են 893 թ. երկրաշարժի ժամանակ։ Շերտագրական տեսակետից այս պատկերը դյուրըմբռնելի է, քանի որ ժամանակագրական տեսակետից ներքին և վերին սահմանները խիստ ընդգծված են։ Դա շատ կարևոր է նյութական մշակույթի մնացորդների ճշգրտության առումով։ Դվինի IX դարի մշակույթը կենտրոնական թաղամասում ներկայացված է բացառիկ հարուստ նյութերով, որոնք լավ ուսումնասիրված են։ Այդ նյութերի մեջ մեծ թիվ են կազմում ջնարակած անոթները, մերձավորարևելյան կենտրոններից ներմուծված շողյուն խեցեղենը, ապակին և այլն։ 1977 թ. հայտնաբերված նյութերի մեջ մեծ արժեք է ներկայացնում ապակե իրերի ժողովածուն։ Ապակու արտադրությունը վաղ միջնադարյան Դվինում անառարկելի է[7]։ IX դարում այն հասնում է բարձր մակարդակի և իր որակով ու բազմազանությամբ ետ չի մնում Մերձավոր ու Միջին Արևելքի ապակեգործական կենտրոններից. Դա փաստագրված է Դվինի բազմամյա պեղումներով[8]։

Կենտրոնական թաղամասից գտնված ապակին բազմաժանր է։ Այստեղ հանդիպում են թեք ակոսիկներով թասիկ-լամպարներ (աղ. I, 3), որոնք դրվել են Մայր տաճարի հիասքանչ ջահերի վրա, կան գունագեղ, բարակապատ հիանալի բաժակ-գավաթներ, որոնք պատրաստված են ազատ փչման տեխնիկայով և լրացուցիչ սչակման են ենթարկվել, բավականին նուրբ են պատրաստված սյացիկ սրվակները (աղ. II, 1, 4)։

IX դարի Հայաստանի ապակու արտադրանքի համար բնորոշ են հաստ պատերով և փորագիր զարդերով մեծ բաժակները (աղ. I, 6, աղ. II, 5, 9)։ Դվինում դրանք հանդիպում են զանգվածաբար։ 1977 թ. նյութերում առանձնանում են երեք բաժակ, որոնք իրենց զարդերով գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում։ Բաժակներից մեկն ունի թռչնակերպ զարդեր (աղ. II, 10). թռչունների կտուցների մոտ կան երեք տաշված օղակներ։ Երկու համանման զարդերը, որոնք բռնում են բաժակի ողջ մակերեսը, բաժանված են միմյանցից պսակաձև զարդերով։ Մյուս բաժակի զարդը, որը

7 К. А. Костанян, А. А. Каланта-рян, Следы стекольного производства в раннесредневековом Двине, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 4։

8 Р. М. Джанполадян, Средневековое стекло Двина IX—XIII вв., Ереван, 1974.

նույնպես կրկնվում է երկու անգամ բաժակի ողջ մակերեսին, բարդ երկրաչափական է և ավարտվում է տարբեր կողմերի վրա թեքված կտուրաձև հատվածներով (աղ. II, 3)։ Նրա կենտրոնական առանցքը կազմում են երկու սլաքներ։ Այստեղ ևս ողջ պատկերը հարստացված է կլոր օղակներով, որոնք դրված են երկու զարդերի սահմանագծում։ Երրորդ բաժակի նախշերը նմանվում են ծառի ճյուղի և միմյանցից բաժանված են շեղանկյուն զարդով (աղ. II, 6)։ Այդ զույգ զարդերն էլ կանաչ ֆոնի վրա են։ Պետք է ասել, որ նման հարդարումով բաժակ Դվինում հանդիպում է արդեն երկրորդ անգամ։ Նույնպիսի մի բաժակ հայտնի է 1975 թ., դարձյալ թվագրվում է IX դարով, սակայն իր անաղարտությամբ և ապակու վճիտությամբ տարբերվում է վերջիններից[9]։ Ըստ երևույթին այդ բաժակը ներմուծված է մերձավորարևելյան որևէ կենտրոնից։ Բացառված չեն նման տեխնիկայով պատրաստված անոթների որոշ ընդօրինակությունները Դվինի ապակեգործ-արհեստավորների կողմից։ Հաստապատ բաժակներից մեկի վրա, որը թերի է, պահպանվել է հորիզոնական դրրքով գրված արաբատառ արձանագրության հատված (աղ. I, 5)։ Քննարկված այս բաժակները և նրանց վրա հանդիպող զարդերը բոլորն էլ փչված են զարդարուն կաղապարներում և հետագա մշակման են ենթարկվել։ Հնարավոր է, որ բաժակների մի մասի զարդերն արվել են տաշելու եղանակով։ Շատ հետաքրքիր է բարակապատ գավաթներից մեկը։ Այն փչված է զարդարուն կաղապարի մեջ։ Հատակի կենտրոնում հավերժություն պատկերող նշան է, որը շրջապատված է տերևաձև նախշերով (աղ. II, 8)։

Դվինի IX դարի ապակու ժողովածուում բացառիկ տեղ են գրավում գունազարդ ապակիները։ Այդ նույն տեղամասից դեռ նախորդ տարիներից հայտնի են մուգ դարչնագույնով արված արաբատառ արձանագրությամբ բարակապատ բաժակներ։ 1977 թ. գտնվել է կապույտ գույնի մի փոքրիկ սրվակ քիչ ուղիղ պատերով և փոքր, կարճ բերանով։ Սրվակի իրանի վերին մասում, կապույտ ֆոնի վրա մուգ դարչնագույնով պատկերված է արծիվ, որն իր մագիլներում կրում է զոհին (աղ. II, 7)։ Շատ ցայտուն են արված արծվի գլուխը և թևերը։ Սրվակի թերի լինելը թույլ չի տալիս գաղափար կազմել ամբողջական կոմպոզիցիայի մասին։ Կարևոր է նշել, որ նման սյուժեն շատ է հանդիպում արևելյան արվեստում և իր լայն տարածումն է ստանում մասնավորապես Սասանյանների օրոք։ Այդ թեման հանդիպում է կնիքների, բարձրաքանդակների և կիրառական արվեստի այլ ստեղծագործությունների վրա։ Հայկական իրականության համար մագիլների մեջ զոհին կրող արծվի պատկերը խորթ չէ և հանդիպում է նաև XII—XIII դդ. բարձրաքանդակներում։ Սրվակի վերին մասերը պատած են նույն դարչնագույնով գրված արաբերեն արձանագրությամբ, որոնք մասնագետների կողմից ընթերցման պրոցեսում են։ Նման պատկերազարդ անոթների սակավությունը ցույց է տալիս, որ դրանք, ամենայն հավանականությամբ, բերված են դրսից և մերձավորարևելյան որևէ ապակեգործական արհեստանոցի արգասիք են։

Դվինի արշավախմբի 1977 թ. կարևոր գյուտերից մեկը դրամների մեծ գանձի հայտնաբերումն է քաղաքի Կենտրոնական թաղից մոտ 100 մ դեպի հարավ։ Այդ գանձի մեջ մտնում են ուշ սասանյան և վաղ արաբական արծաթե դրամներ կտրտված վիճակում։ Գանձը գտնվել է կոլտնտեսության դաշտերում, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ։ Այդ վայրում կատարված պեղումները շերտագրական առումով ոչ մի շոշափելի արդյունք չտվեցին։ Երկարամյա աշխատանքները և հողերի հարթեցումներն այդ հատվածում զգալի վնաս են հասցրել կառույցներին։ Այսուհանդերձ որոշակի է, որ այդ գանձը պահպանվել է կավանոթի մեջ, կոտրվելու հետևանքով սփռվել է մոտ 100 քառ. մետր տարածության վրա։ Նման գանձեր քիչ են հայտնի մասնագետներին։ Պետք է ասել, որ Հայաստանում դրանք հանդիպել են Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում, որը միջնադարյան Կոթ ավանի տեղում է կառուցված և շրջկենտրոնում[10]։ Կտրտված դրամների կիրառական նշանակությունը դժվար է որոշել։

Դվինի 1977 թ. պեղումների արդյունքները և գտնված նյութերը շատ կարևոր են միջնադարյան Հայաստանի նյութական արտադրության, սոցիալական հարաբերությունների որոշ հարցերի պարզաբանման համար։

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

---

9 Р. М. Джанполадян, А. А. Калантарян, Стеклянные сосуды из раскопок Двина, АО 1975 г., М., 1976, էջ 508։

10 Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան, Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 1, էջ 66։